Բերդիս սարոտներն կան շատ մի աւերակ Թաղեր՝ —Սորանցոց, Փեթակճոց, ևլն. որ ժողովուրդն ցմիշտ պեղելով՝ հին շինութեանց հողի տակ մնացած քարերը դուրս կը հանէ, իրար վրայ կուտելով՝ նոր շինութեանց տէրերուն կը վաճառէ:

Բերդիս աղբիւրներն.—Հեռի սարերէ ագուգայներով աղբիւրներ բերուած են հին Վաղարշակերտը, որոց մեծերն են Շահկօլի[1], Ֆէրալի, Փաշի, Բալօյի ևլն. գրեթէ ամենն ևս ունին փողրանկներ և կարելի էր սակաւ ծախքով դարձեալ ջուր բերել:

Ջրուղիներու վրայ շարուած ագուգայք մեծ և կարծր լինելն ապացոյց են հնութեանց, քաղաքիս բազմամարդութեան, որ կարողացած են 3 $^1/_2$ ժամ հեռի լեռներու գագաթներն ու կողերն պեղելով ջուր հասցնել:

Շահկօլ աղբիւրն՝ որ կը գտնուի Շահկօլ լեռներու գագաթն, սորա մեծ մասն ագուգայներու մէջ առնելով 3 ժամու չափ արևելեան հարաւ, հինն Վաղարշակերտ հասուցած են:

Բագրևանդ որչափ որ անհաշիւ աղբիւրներով կը վխտայ, սակայն գիւղաքաղաքիս գետինը մեծ մասամբ կրաքարի ժայռերէ կազմուած, տեղ տեղ այդ ժայռերն քայքայուած գլուլթեան ենթարկուած են, վասն որոյ բնական աղբիւրներ քիչ կան, եղածն ևս աղի վիճակի մէջ կը գտնուին:

Վաղարշակերտի շուրջն կան սառն և կենդանու-

---

[1] Ըստ հասարակ տեղացիք [illegible] կը հնչեն փոխանակ [illegible] միահնչման, որ ընդհանրապէս տաճ. հնչում է. նաև կը գրեն [illegible] որ աւելի ճիշդ է.